Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/8243/02/23**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ ՎԱՀԱԳՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ

2024 թվականի հուլիսի 01-ին

Քննարկելով <<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, մասնակցությամբ երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնումներ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Կարեն Անտոնյանի 01.02.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ի անունից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, մասնակցությամբ երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնումներi գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Կարեն Անտոնյանի 01.02.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Բաղիրյան) 09.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

26.06.2024 թվականին քաղաքացիական գործը վերաբաշխվել է և նույն օրը մակագրվել է Դատարանի դատավոր Վ.Թորոսյանին, իսկ նույն դատավորի աշխատակազմին հանձնվել է 28.06.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց: Նույն հոդվածի 2-

րդ մասի համաձայն՝ նախնական դատական նիստը պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ (...) դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (...) վարույթ ընդունելու մասին որոշում, և գործի (...) քննությունն սկսվում է սկզբից:

Տվյալ դեպքում գործի արդյունավետ քննությունն իրականացնելու նպատակով դատարանը միաժամանակ նշանակում է նախնական դատական նիստ և գործի քննությունն սկսում է սկզբից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով, 166-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ **ԵԴ/8243/02/23** քաղաքացիական գործն ընդունել վարույթ և գործի քննությունը սկսել սկզբից:

2. **Գործով նախնական դատական նիստը նշանակել 2024թ.-ի սեպտեմբերի 12-ին ժամը 14:30-ին՝** ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրում (ք.Երևան, Հր.Ներսիսյան 10, դատական նիստերի դահլիճ թիվ 2):

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Վ. ԹՈՐՈՍՅԱՆ**